

ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ԵՎ
ՍՏՈՐՈԳԵԼԻԻ ԶԵՂՉՈՒՄԸ ԳՐԱԿԱՆ ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ

Աննա Դանիելյան

Բանալի բառեր՝ օժանդակ բայ, լիմաստ բայ, անվանական նախադասություն, kāna, laysa, զեղչում, հանգույց, ստորոգելի, ժխտում:

Տեսական լեզվաբանության մեջ չի նշվում որևէ հստակ նկարագրություն, որով հնարավոր լինի սահմանել այս կամ այն մասնիկը՝ որպես օժանդակ բայ. միջլեզվական համեմատությունները ցույց են տալիս, որ օժանդակ բայերը չունեն նկարագրման հստակ սահմաններ¹: Հիմնական հատկանիշը, որով դրանք ներկայացվում են, այն է, որ, ի տարբերություն լիմաստ բայերի, դրանք իմաստով ավելի վերացական են և մոտ են ձևակազմական մասնիկի² իմաստին, սակայն ունեն բային հատուկ ձևաբանական և շարահյուսական գործառնություններ՝ դիմայնություն, թիվ, ժամանակի և եղանակի քերականական նշանակություններ: Կարևորագույն գործառնությքը, որ կատարում են օժանդակ բայերը, ստորոգյալի շարահյուսական դիրքի իրացումն ապահովելն է՝ լինի այն բայական, թե անվանական (կամ բաղադրյալ, ինչպես դա անվանվում է հայերենում³), այսինքն՝ հանդես են գալիս որպես ստորոգող: Անուն խոսքի մասերի հետ զուգորդվելով՝ նրանք կազմում են դիմավոր ձևեր,

¹Heine, B., Auxiliaries, Cognitive Forces, and Grammaticalization, New York: Oxford University Press, 1993, p. 70, Kuteva, T., Auxiliation: An Enquiry into the Nature of Grammaticalization. Oxford: Oxford University Press, 2001, p. 5.

²Այստեղ՝ դիմայնություն և ժամանակային նշանակություն կրող ձևային մասնիկ, վերջավորություն (ինչպես հայերենում՝ -ցի. -ցիր, -ցինք..., - եմ/ամ, - ենք/անք, - ի/ա...):

³Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 367, 369

իսկ բայերի և դերբայների հետ՝ բաղադրյալ ժամանակաձևեր⁴: Ընդհանրապես, ելակետային բայական նշանակությունը՝ անորոշը կամ ինֆինիտիվը, որը որպես իմաստաբանական հիմք վերագրվում է օժանդակ բայերին, կապվում է էական բայերի⁵, առավել հաճախ՝ լինել բայի հետ, ինչպես ժամանակակից հայերենի լինել-ն իր շարքերով՝ եմ, ես, է..., էի, էիր, էր..., անգլերենի *to be*-ն⁶ իր շարքերով՝ *am, is, are...*, *was, were, been...* և այլն: Սակայն իրենց շարահյուսական կիրառությամբ օժանդակ բայերը հանդես են գալիս սուկ որպես սպասարկու միավորներ և, քանի որ չունեն ինքնուրույն կիրառություն, նշվում են որպես թերիմաստ կամ պակասավոր: Սա է, թերևս, պատճառը, որ ժամանակակից հայերենում որպես օժանդակ բայերի ելքային կամ մեկնարկային միավոր առանձնացվում է *եմ* բայը⁷:

Արաբերենում լինել նշանակությունն արտահայտում է *kāna* բայը: Հնչյունական կազմով այն համարվում է դատարկ բայ⁸, իսկ շարահյուսական գործառությամբ՝ պակասավոր, այլ կերպ ասած՝ նախադասության մեջ ինքնուրույն, առանց լրացուցիչ միավորի իրացվելու հնարավորություն չունեցող բայ: Այն կիրառվում է ն՝ անվանական⁹, և՛ բայական նախադասություններում: Անվանական նախադասությունները *kāna*-ի միջոցով վերածվում են

⁴ Nasser Al-Horais, On the Universality of Auxiliary Verbs, Journal of Universal Language, 13-1, March 2012, pp. 10-13, http://203.250.148.79/upload/word/JUL2012_spring_Nasser_Al-Horais_et_al.1.pdf

⁵ Գոյության նշանություն արտահայտող բայեր:

⁶ Անգլերենի *to do (անել)* օժանդակ համարվող բայը կիրառվում է բացառապես բայական ստորոգյալի հետ՝ որպես այդ միավորի գործողության ներակա նշանակություն, և բացի այդ՝ էական բայ չէ:

⁷ Աբեդյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 136, 312, 367, 369.

⁸ Արաբերենում դատարկ են համարվում եռահարֆ կապակցության երկրորդ արմատական հարֆի դիրքում ձայնավոր՝ թույլ հարֆ (տառ) ունեցող բայերը:

⁹ Արաբերենում անվանական են համարվում անուն խոսքի մասերով սկսվող նախադասությունները, իսկ բայական՝ բայով սկսվող նախադասությունները:

անցյալի, այսինքն՝ *kāna*-ն այստեղ կատարում է անցյալ ժամանակի օժանդակ բայի գործառույթ: Բայական նախադասություններում ստորոգյալը դիմային է առանց որևէ օժանդակ բայի կամ նրա գործառույթն իրականացնող միավորի, և *kāna*-ն այստեղ կիրառվում է բայի ժամանակային նշանակության մոդիֆիկացիաներ արտահայտելու համար՝ կրկին կատարելով օժանդակ բայի գործառույթ.

Al-jawu hārun. – Եղանակը շոգ է:	Kāna l-jawu hāran. – Եղանակը շոգ էր:
Yaktubu l-waladu fi daftarihi. Տղան գրում է իր տետրում:	Kāna l-waladu yaktubu fi daftarihi. Տղան գրում էր իր տետրում:

Արաբերենում անվանական նախադասությունների ներկայում ստորոգումն իրացվում է առանց հանգույցի և նույնական է ռուսերենի ստորոգման մեխանիզմի հետ.

'anā ṭālib. – Ես ուսանող [եմ]

Я студент. – Ես ուսանող [եմ]

Ժամանակակից արաբ հեղինակներից ոմանք (Bakir (1980), Fassi Fehri (1993), Bahloul (1993))¹⁰, դիտարկելով արաբերենի նյութը գեներատիվ քերականության համատեքստում, անվանական նախադասության ներկայում ենթադրում են գեղչված հանգույցի գոյություն՝ նշելով *kāna*-ի ներկա ժամանակի կիրառության հնարավորությունը որոշ նախադասություններում.

Al-jawu hārun – Եղանակը շոգ է:

Yakūnu l-jawu hāran fi ṣ-ṣayfi- Ամռանը եղանակը շոգ է լինում:

Մի կողմ թողնելով այս երկու նախադասությունների իմաստաբանական ընդգրկումը՝ նրանք առավելապես շեշտը դնում են *kāna*-ի կիրառության վրա, որի ենթադրելի գոյությունը

¹⁰Nasser Al-Horais Arabic Verbless Sentences: Is there a null VP? Pragmalingüística, 14, (2006), 101-116, p. 104

նրանք հիմնավորում են նման նախադասությունների անցյալ ժամանակում նրա պարտադիր դրսևորմամբ և նաև արաբերենի թերի նախադասություններում (šibhu l-jumla¹¹) նրա ենթադրելի գոյությամբ, ինչպես.

Al-waladu fi l-ğurfati – Տղան սենյակում (է)

Yakūnu l-waladu fi l-ğurfati – Տղան լինում է սենյակում

Թերի նախադասություններում, սակայն, առավել ենթադրելի են էական բայերի դերբայական կադապարները՝ qāḍinun, maujūdun՝ *կա, առկա է* նշանակություններով, կամ yujadu՝ *գտնվում է, կա* կրավորական բայը.

Yujadu l-waladu fi l-ğurfati/Al-waladu maujūdun fi l-ğurfati– Տղան գտնվում է սենյակում

Ռուսերենի նմանատիպ նախադասություններում ստորոգյալի դիրքում իրացված միավորը ենթակային վերագրող բայի նշանակությունը ներակա է, այսինքն՝ վերականգնելի է լսողի մտապատկերում.

Я [есть] студент.

Мальчик [находится] в комнате.

Արաբերենում kāna-ի գոյությունը ներկա ժամանակի անվանական նախադասություններում զուտ իմաստաբանական հարթության մեջ է ենթադրելի, իսկ այն նախադասություններում, որտեղ ներկա ժամանակում kāna-ն առկա է և հնչական իրացում ունի, կիրառվում է ընդհանրական, ներակա հատկանիշ ներկայացնելու իմաստով և իր գործառնությունով ավելի մոտ է լիիմաստ բային: Այստեղ yakūnu միավորը նույնանում է ոչ թե есть,

¹¹ Արաբերենում թերի են համարվում այն նախադասությունները, որոնց ստորոգյալի՝ *xabar*-ի դիրքում իրացված է նախդրավոր կամ պարագայական կառույց:

այլ *быть* (*бывает*), և հայերենի ոչ թե էօժանդակ բայի, այլ *լինում է*¹² լիմաստ բայի նշանակության հետ .

Huwa fi l-bayti. – Он дома. – Նա տանն է:

Yakūnu fi l-bayti. – Он бывает дома. – Նա տանն է լինում:

Անվանական նախադասությունների անցյալում ռուսերենում երևան է գալիս *быть* բայը, որը, ինչպես և *kāna*-ն, իր շարահյուսական ազդեցությունն է թողնում ստորգելիի դիրքում իրացված միավորի թեքական ձևի վրա .

Я был студентом. – Ես ուսանող էի:

Kuntu ṭāliban. – Ես ուսանող էի:

Быть բայը, սակայն, չի ստանձնում ստորոգյալի պաշտոնը և студентом միավորը չի վերլուծվում որպես խնդիր, այլ *был студентом* հատվածը նկարագրվում է՝ որպես բաղադարյալ անվանական ստորոգյալ (*составное именное сказуемое*)¹³: Արաբական լեզվաբանական գրականության մեջ *kāna*-ն առանձնացվում է մի խումբ այլ միավորների հետ՝ *kāna wa 'axawāwaha* (*kāna*-ն և համագործառույթ միավորները)՝ դիտվելով որպես ֆունկցիոնալ առումով առանձին տեսակ, որի ազդեցությամբ անվանական նախադասության ստորոգյալը՝ *xabar*-ը, դրվում է *mansūb*՝ խնդրառական բառափոխական դիրքով: Սակայն *kāna*-ի ազդեցությամբ *xabar*-ի դիրքում իրացված միավորի թեքման փոփոխությունը զուտ ձևային է, այսինքն՝ ստորոգյալը շարունակում է դիտվել որպես ստորոգյալ՝ որակվելով *xabar kāna*, և բայի ի հայտ գալով չի դառնում խնդիր: Սա նշանակում է, որ անվանական նախադասությունը *kāna*-ի նախադրմամբ չի

¹² Հայերենում, օրինակ, *չոզ է լինում* հատվածում *լինում է* - ն վերլուծվում է որպես ստորոգյալ, իսկ *չոզ* -ը՝ որպես ստորոգելիական վերադիր (ՏԵ՝ս Արեղյան Մ., նշվ. աշխ., էջ 400):

¹³ Арутюнова А.Д. Сказуемое//Лингвистический энциклопедический словарь <http://tapemark.narod.ru/les/454b.html>

վերածվում բայականի, հակառակ դեպքում նախադասության գլխավոր անդամները չէին նկարագրվի որպես *mubtadaθ*-ն՝ *ism kana*¹⁴, իսկ *xabar*-ը՝ *xabar kana*, այլ, համապատասխանաբար, *fa'il* և *fi'l*¹⁵: Ասինքն՝ *kāna*-ն չի ստանձնում ստորոգյալի դերը, այլ հանդես է գալիս միայն որպես անվանական ստորոգյալի իրացումն ապահովելու միջոց՝ հանգույց, ստորոգյալին հաղորդում է ժամանակայնություն, ունի դեմք և թիվ՝ դրանով իսկ կատարելով օժանդակ բայի գործառույթ:

Արաբական լեզվաբանական գրականության մեջ առանձնացվում են *kāna*-ի *tamma* (*ամբողջական*) և *nāqisa* (*թերի*) տեսակները¹⁶: *Kāna tamma*-ն խնդրառական բառափոխական դիրք, այսինքն՝ *xabar* չպահանջող միավոր է, որն արտահայտում է «գոյություն ունենալ, լինել, կատարվել» նշանակությունները (1), իսկ *kāna nāqisa*-ն խնդրառական բառափոխական դիրք պահանջող, և այդ դիրքում իրացված միավորի հատկանիշը ենթակային վերագրող միավոր է¹⁷.

(1) *Ma ša'a l-lahu kāna*. – Աստված ինչ կամենում է, լինում է:

(2) *Kāna l-bābu muğlaqan*. – Դուռը փակ էր:

Այս հանգամանքը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ *kāna*-ի ներկայի ձևն *իմաստաբանորեն* *kāna tamma* է, որովհետև պահպանել է լիմաստ բայական *լինել* նշանակությունը, իսկ անցյալի ձևը՝ *kāna nāqisa*, որովհետև հեռացել է այդ նշանակություն-նից և կատարում է օժանդակ բայի գործառույթ:

¹⁴ *Mubtada* եզրույթով արաբերենում նշվում է անվանական նախադասության ենթական և նշանակում է «սկիզբ», «մեկնարկ», և քանի որ *kāna*-ի նախադրամբ այն դադարում է սկսող միավոր լինելուց, վերանվանվում է *ism kāna*:

¹⁵ Արաբերենի բայական նախադասության ենթական և ստորոգյալը:

¹⁶ حسن عبيد محيسن المعموري، النقص والتمام في كان وأحواتها ، وزيادة كان

<http://www.uobabylon.edu.iq/uobColeges/lecture.aspx?fid=19&lcid=28304>

¹⁷ حسام الخطيب، مصطفى جطل، اللغة العربية لغير المختصين، الكتاب الأول، منشورات جامعة

حلب، مديرية الكتب والمطبوعات الجامعية، 1985-1986، ص. 94-95

Արաբական լեզվաբանական ավանդույթում որոշ հեղինակներ (Միբավելյի (8-րդ դ.), Իբն Ջիննի (10-րդ դ.), Իբն Հիշամ (14-րդ դ.) և այլոք) զեղչման իրացման համար նշում են որոշակի քերականական սահմանափակումներ: Մասնավորապես՝ ելնելով կառավարման համակարգի պահպանման նկատառումներից՝ արաբերենում այս կամ այն միավորի զեղչման դեպքում նրա շարահյուսական ազդեցությունը շարունակում է դրսևորվել, այսինքն՝ նրա առաջացրած շարահյուսական միջավայրը չի չեզոքանում և զեղչված միավորի ենթադրելի գոյությամբ է բացատրվում շարահյուսական որոշ միավորների բառափոխական դիրքը:

Hađartu wa tulū'a š-šamsi.-Արթնացա լուսաբացին:

Hađartu wa **ra'aytu** tulū'a š-šamsi. –Արթնացա և տեսա լուսաբացը:

Եթե հետևենք այս տրամաբանությանը, ապա al-jawu hārūn նախադասության xabar-ը պետք է լիներ խնդրառական դիրքով՝ որպես զեղչված kāna-ի ազդեցության կրող և որպես նրա գոյության ցուցիչ: Սակայն արաբերենում xabar-ի պարտադիր հատկանիշ է նրա ինքնառական՝ marfū' լինելը: Այս հակասությունից կարելի է եզրակացնել, որ անվանական նախադասությունների ներկայում kāna-ի զեղչված լինելու ենթադրությունը հիմնավորված չէ, և այն դրական խոնարհման օժանդակ բայի (կամ հանգույցի) գործառույթ է կատարում միայն անցյալ ժամանակում:

Ինչ վերաբերում է ժխտական խոնարհման օժանդակ բայերի գոյությանը, նշենք, որ ժխտումն արաբերենում իրականացվում է մի շարք մասնիկների միջոցով, որոնք ունեն տարբեր գործառույթներ: Դրանք են՝ գործողության ժխտման ժամանակայ-

նացված *lā* (ներկայի ժխտում), *mā*¹⁸, *lam* (անցյալի ժխտում) և *lan* (ապառնիի ժխտում) մասնիկները և *laysa* բայական գործառույթ ունեցող ժխտական միավորը: Նասեր ալ Հորայսը Նյուքասլի համալսարանից, որը կատարել է ժխտական մասնիկների միջլեզվական համեմատություններ, նշում է, որ այդ մասնիկները սեմական լեզուներում կատարում են օժանդակ բայի գործառույթ¹⁹: Արաբերենում, որպես բազմաֆունկցիոնալ ժխտական միավոր, նա առանձնացնում է *laysa*-ն: Այն միջանկյալ միավոր է, որը կիրառվում է մի կողմից անվանական նախադասության ներկա ժամանակի ժխտման, մյուս կողմից՝ ժամանակային նշանակություն չունեցող միավորների ժխտման համար: *Laysa*-ն առանձնանում է վերը թվարկված ժխտական մասնիկներից իր բայական գործառույթով և այդ պատճառով համարվում է ոչ թե ժխտական մասնիկ, այլ ժխտական օժանդակ բայ²⁰: Լինելով *kāna wa ʾaxawātuha* շարքի միավոր՝ այն ունի ձևաշարահյուսական նույն նկարագիրը, ինչ *kāna*-ն, միայն թե ժխտական ներկայի նշանակությամբ.

Al-jawu hārun. - Եղանակը շոգ է: ʾana mašǧūl. - Ես զբաղված եմ:	Laysa l-jawu hāran. - Եղանակը շոգ չէ: Lastu mašǧūlan. - Ես զբաղված չեմ:
--	--

Ակնհայտ է, որ *laysa*-ն նույնպես ունի այն հիմնական հատկանիշները, որոնք հատուկ են օժանդակ բայերին՝ դիմայնություն, ժամանակ, թիվ, սակայն օժանդակ բայի

¹⁸ *Mā* մասնիկով կարող են ժխտվել նաև անվանական նախադասությունը (*mā* "indi kitṣb) և ներկա ժամանակի բայը (*mā yafhamu*):
¹⁹ On the Universality of Auxiliary Verbs* 1 Nasser Al-Horais Journal of Universal Language 13-1 March 2012, pp 7-30,
http://203.250.148.79/upload/word/JUL2012spring_Nasser_Al-Horais_et_al.1.pdf
²⁰ Al-Khawalda M., Syntactic Analysis of the Arabic Word “*laysa*”: An Auxiliary Verb or a Negative Particle //International Journal of Linguistics, 2012, Vol. 4, No. 3, p. 469

գործառույթ ունենալուց զատ՝ այն ունի նաև ժխտական մասնիկի գործառույթ՝ ոչ բայական միավորների հետ կիրառվելիս, ինչպես.

*Aliun yashamu t-talāmīdu d-darsa laysa minhu*²¹

Ալին, որի [բացատրածից] չէ, որ աշակերտները հասկանում են դասը (հասկանում են ոչ նրանից):

Aliun yašrahu d-darsa laysa likatīrin min at-talāmīdi.

Ալին, որը բացատրում է դասը աշակերտներից ոչ շատերին:

*Dirhamun wahidun ‘indī laysa illa /ghayr*²².

Ես մեկ դիրհեմ ունեմ, ոչ ավելի:

Այս գործառույթով *laysa*-ն, ինչպես ցույց են տալիս օրինակները, նույնանում է հայերենի «ոչ» մասնիկի հետ, որը գրաբարում կատարել է ն՛ բայի, ն՛ ոչ բայի (անվանական ստորոգյալի, ածականի, մակբայի) ժխտման գործառույթ²³, պահպանելով այն նաև ժամանակակից հայերենում: «Ոչ»-ի գործառույթն արաբերենում կատարում է նաև *lā* մասնիկը, ինչը կարելի դիտարկել գործողությունների հակադարձ հարաբերությունն արտահայտող համադաս նախադասություններում: Կրկնաբանությունից խուսափելու նպատակով նախադասության երկրորդ հատվածում ստորոգյալը զեղչվում է և նրան փոխարինում է *lā* մասնիկը՝ անկախ ստորոգյալի ժամանակային նշանակությունից՝ ներկա, անցյալ, թե ապառնի: Խնդիրն այն է, որ ժխտական մասնիկները, թեև ունենալով ժամանակայնության կոնկրետ նշանակություն, չունեն բայական գործառույթ և

²¹ Օրինակներն ըստ Nasser Al-Horais, Is there a negative marker with multiple syntactic functions?, Abstract, The 2nd Newcastle Postgraduate Conference in Theoretical and Applied Linguistics, the 25th of June 2007

²² Ժխտական մասնիկների հետ *ghayr*-ի կիրառությունը տե՛ս

عباس حسن، النحو الوافي، الجزء الرابع، ص. 112، دار المعارف، 1964

²³ Ավետիսյան Հ.Մ., Ղազարյան Ռ.Մ., Գրաբարի ձեռնարկ, 3-րդ հրատարակություն, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1992թ., էջ 47

դիմայնություն չեն արտահայտում, ուստի ինքնություն կիրառություն չեն կարող ունենալ: Lā-ն այս պարագայում այն չեզոք միավորն է, որը, բացի ներկա ժամանակի բայի ժխտումն ապահովելուց, նաև ժխտական պատասխանական մասնիկ է և այդ իմաստով ավելի անկախ է: Դա է, թերևս, պատճառը, որ այն կարող է իրացվել զեղչված ստորոգյալի դիրքում՝ անկախ նրանից, թե ինչ ժամանակով է վերջինս կիրառված.

Yusāfiru šadīqī, lakinnanī lā- Ընկերս մեկնում է, իսկ ես՝ ոչ:

Fahimtu d-darsa, lakinnahu ~~lā~~. – Ես հասկացա դասը, իսկ նա՝ չ...

Fahimtu d-darsa, lakinnahu lā. – Ես հասկացա դասը, իսկ նա՝ ոչ:

Saʿadhabu ʿila l-jāmiʿati, lakinnaka ~~lā~~. – Ես կգնամ համալսարան, իսկ դու՝ չես...

Saʿadhabu ʿila l-jāmiʿati, lakinnaka lā. – Ես կգնամ համալսարան, իսկ դու՝ ոչ:

Մյուս կողմից՝ այս նախադասությունների առաջին հատվածը ժխտական դարձնելիս *naʿm-ayn* հաստատական պատասխանական մասնիկն արաբերենում չի կիրառվում, ինչպես.

Lā yusāfiru šadīqī, lakinnanī ~~naʿm~~ – Ընկերս չի մեկնում է, իսկ ես՝ ~~այո~~:

Lā yusāfiru šadīqī, lakinnanī ʿusāfiru. – Ընկերս չի մեկնում է, իսկ ես մեկնում եմ:

Mā fahimtu d-darsa, lakinnahu ~~naʿm~~. – Ես չհասկացա դասը, իսկ նա՝ ~~այո~~

Mā fahimtu d-darsa, lakinnahu fahima. – Ես չհասկացա դասը, իսկ նա հասկացավ:

Lan ʿadhaba ʿila l-jāmiʿati, lakinnaka ~~naʿm~~. – Ես չեմ գնա համալսարան, իսկ դու՝ ~~այո~~:

Lan ʿadhaba ʿila l-jāmiʿati, lakinnaka satadhabu. – Ես չեմ գնա համալսարան, իսկ դու կգնաս:

Օրինակներից կարելի է ենթադրել, որ *lā* մասնիկի՝ ստորոցյալի զեղչման հնարավորությունն ապահովելը պայմանավորված է ոչ միայն և ոչ այնքան ժխտական պատասխանական մասնիկ լինելու, որքան ներկա ժամանակի բայը ժխտելու գործառույթով, հակառակ դեպքում զեղչված ստորոցյալի դիրքում հնարավոր կլիներ նաև հաստատական պատասխանական մասնիկի իրացումը: Նույնը կարելի է ասել նաև հայերենի պարագայում. ոչ մասնիկի գրաբարյան վերոնշյալ գործառույթի, և ոչ այնքան ժխտական պատասխանական մասնիկ լինելու շնորհիվ է, որ հնարավոր է նրա իրացումը զեղչված ստորոցյալի փոխարեն:

Խոսելով մասնիկների ժամանակային նշանակության մասին, նշենք, որ արաբերենում միայն ժխտական մասնիկները չէ, որ դրա կրողն են: Նման նշանակություն ունեն նաև *saufa* (ապառնիի ցուցիչ՝ կ-, պիտի) և *qad* (վաղակատարության ցուցիչ անցյալ ժամանակում) մասնիկները, որոնք ևս դիմայնություն և ինքնուրույն կիրառություն չունեն և հանդես են գալիս բայի հետ: Նման մասնիկները, ինչպես և վերը նշված ժխտական մասնիկները, ավել շուտ եղանակիչներ են՝ համապատասխանաբար անցյալի (*mā, lam*), ապակատարի (*saufa, lan*) և վաղակատարի (*qad*) քերականական նշանակություններով:

Ի տարբերություն նշված ժխտական մասնիկների՝ *laysa*-ն, շնորհիվ իր բայական գործառույթի, կարող է ինքնուրույն կիրառություն ունենալ՝ հանդես գալով որպես հանգույց և ապահովելով ստորոգելիի զեղչման հնարավորությունը.

՝Ana ṭālibun, lakinnaka lasta. - Ես ուսանող եմ, իսկ դու չես:

Նույն հնարավորությունն ունի նաև *kāna*-ն.

Ma kuntu marīdan, lakinnahu kana. - Ես հիվանդ չեի, իսկ նա էր:

Մյուս կողմից՝ kāna-ն այս գործառույթն իրականացնում է միայն անցյալ ժամանակում, քանի որ հենքային նախադասության մեջ արդեն իսկ ունի հնչական իրացում, այսինքն՝ հենաշարույթ՝ միավոր, որն ապահովում է խոսքի հոսքում մեկ այլ միավորի զեղչման տրամաբանությունը: Ներկայի պարագայում kāna-ն չունի այդ հնարավորությունը: Քննարկենք օրինակը .

Lastu marīdan, lakinnahu yakūnu. – Ես հիվանդ չեմ, իսկ նա ~~իմում է:~~

Lastu marīdan, lakinnahu marīdun. – Ես հիվանդ չեմ, իսկ նա հիվանդ է:

Ակնհայտ է, որ ներկա ժամանակի անվանական նախադասություններում ենթադրվող yakūnu հանգույցի առկայությունը նման նախադասություններին արհեստականորեն վերագրվող հատկանիշ է, և որ ներկա ժամանակում kāna-ն ունի միայն լիիմաստ բայի նշանակություն:

Ամփոփում

Արաբերենում kāna և laysa միավորներն իրականացնում են օժանդակ բայի գործառույթ kāna-ն՝ հաստատական նախադասությունների անցյալում, իսկ laysa-ն՝ ժխտական անվանական նախադասությունների ներկայում:

Անվանական նախադասությունների ներկայում ենթադրվող հանգույցի գոյությունը քննություն չի բռնում. kāna բայը ներկայում *լինել* բայի լիիմաստ դրսևորում է:

Ժամանակային նշանակություն ունեցող ժխտական մասնիկներն օժանդակ բայի գործառույթ չեն կարող կատարել. Այդ է վկայում զեղչված ստորոգման պարագայում դրանց իրացման անհնարինությունը նախադրված ստորոգման՝ համապատասխան ժամանակով ժխտական նշանակությունն արտահայտելիս՝ բացառությամբ lā մասնիկի: Ստորոգելիի զեղչումը հնարավոր է

միայն *kāna*-ի և *laysa*-ի՝ որպես հանգույցի շարահյուսական գործառույթն իրականացնող միավորների առկայության պարագայում:

THE FUNCTION OF AUXILIARY VERBS AND THE PREDICATE ELLIPSIS IN STANDARD ARABIC

Summary

Anna Danielyan

In Arabic the verb *kāna* and the negative particle *laysa* perform the function of auxiliary verbs: *kāna* in affirmative sentences in the past, and *laysa* in negative nominal sentences in the present. In this article I discuss the assumption of a null copula in Arabic verbless sentences in present. I argue contra this assumption, looking at this issue from the point of view of predicate ellipsis. Examples in the article show, that the present tense of the verb *kāna* isn't an auxiliary, but a regular verb.

There are several negative particles in Arabic, but the only negative auxiliary verb is *laysa*. The other particles, though having a meaning of time, do not have this function, as they can't be used instead of a deleted predicate and negate it in appropriate time, except the particle *lā*. Predicate ellipsis is possible only if there is *kāna* or *laysa* in the sentence, as they perform the syntactic function of a copula.